Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 դեկտեմբերի 2024 թվական ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-177/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար մալուխների և մալուխային պատրաստվածքների ձեռք բերման նպատակով 2024 թվականի հոկտեմբերի 28-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-177/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ՊՐՈՖԱՐՏ» ՍՊ ընկերությունը: Փաստաթղթերի գնահատման արդյունքում «ՊՐՈՖԱՐՏ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից չորս չափաբաժիններով և առաջարկվել է կնքել մալուխների և մալուխային պատրաստվածքների մատակարարման պայմանագիր: «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնակցին ուղարկվել է պայմանագրի նախագիծը, սակայն «ՊՐՈՖԱՐՏ» ՍՊ ընկերությունն այդպես էլ չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի օրինակը, ինչպես նաև՝ որակավորման և պայմանագրի ապահովումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1.Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: ...»:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՊՐՈՖԱՐՏ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**